



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«Գ» օգոստոսի 2013թ.

N 175-Ձ

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՒՄԻ 9-Ի N165-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝


հ Ր Ա Մ Ա Ն Ե Մ .

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 9-ի «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2013-2014 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» /այսուհետ՝ ուսումնական պլաններ/ N 165-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումը.

1. Ռեսուրսային պլանների 20-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «5-րդ դասարանում 3-րդ ու 4-րդ և 6-րդ դասարանում 5-րդ ու 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում են 1-ական ժամ՝ դպրոցական բաղադրիչից կամ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:



*Ս. ԱՍՐՅԱՆ*

**Ս. ԱՍՐՅԱՆ**

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 165-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» N 175-Ն ՀՐԱՄԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 7-ի «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության հուլիսի 9-ի N 165-Ն հրամանում լրացում կատարելու մասին» N 175-Ն հրամանով պարզաբանվում է օրինակելի ուսումնական պլանների 20-րդ կետի 2-րդ ենթակետում՝ երրորդ օտար լեզու դասավանդելու դեպքում 5-րդ դասարանում 3-րդ ու 4-րդ և 6-րդ դասարանում 5-րդ ու 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար դպրոցական բաղադրիչից կամ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից լրացուցիչ դասաժամերի հատկացումը, որը թյուրիմացաբար չի ընդգրկվել:

Լրացումը հստակեցնում է դասաբախշման գործընթացը:

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության  
կրթության և գիտության նախարար՝

Ս. Ասրյան